



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԹՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԼՆ

ՔԱՆԱՄԵԱԿԸ

1906-1926

1926

ՆԻՒ ԵՈՐՔ

361

Ք-70

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

Ամփոփ Հաշուեկշիռ Քսան Տարիներու

(1906-1925)

ԸՆԻՀ. ՄՈՒՏՔ

Մուտքի տուրքեր	115.195.00
Անդամագճարներ	483.130.00
Հիմնական Դրամագլխի համար	137.220.00
Մասնաւոր Դրամագլխի համար	400.340.00
Հիմնական և Մասնաւոր Դրամագլուխներու հասոյթներ և տուկոսներ	275.325.00
Որբերու, գաղթականներու և աղէտեալներու համար հանդանուկութեանց և նուէրներու արգիւնք	1.778.625.00
	<hr/>
	§3.189.835.00

ԸՆԻՀ. ԵԼՔ

Այլևայլ նպատակներու յատկացում	\$1.821.540.00
Հիմնական Դրամագլխի հաշւոյն անցած	328.060.00
Մասնաւոր Դրամագլխի հաշւոյն անցած	441.735.00
Պահեստի և ստիպողական նպաստներու հաշւոյն	127.650.00
Ընդհանուր ծախք	273.760.00
Պատրաստ, 1925ի վերջը	197.090.00
(Տրամադրելի՝ հիմնադրամներու, քնդի. ծախսուց և այլ նպաստներու :)	
	<hr/>
	§3.189.835.00

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ՔՍԱՆԱՄԵԱԿԸ

1906-1926

Ապրիլ 15ը ազգային մեծ դէպքի մը տարեգարձն է :

Այն օրն է որ Հայական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը հիմնուեցաւ Գահիրէ, ասկէ 20 տարի առաջ, 1906ին :

Եւ խորհրդաւոր զուգադիպութեամբ մը Հայկական Զատիկն ալ կը տօնուէր միեւնոյն օրը :

Ուրեմն տարւոյս Ապրիլ 15ին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը բոլորած եղաւ քսան տարուան շրջան մը :

Հ. Բ. Ը. Միութեան ծնունդը մեր պատմութեան հոյակապ էջերէն մին կը կազմէ : Առաջին անգամն է որ աշխարհիս ամէն կողմէն Հայեր ձեռք ձեռքի կուտային, առանց դաւանանքի եւ դասակարգի խտրութեան, եւ Ազգային Վերածնութեան գաղափարին նուիրուած՝ կ'արձանադրուէին ուխտաւորական բանակի մը


3 AUG 27 1933

Հարգելի լինում է ձեր կազմակերպելու այժ Ըստեղծելու, ինքնօգնութեան և ինքնապաշտպանութեան ամբողջներ կերտելու:

Հ. Բ. Ը. Միութիւնը ազգատանամարմին մը էր, ինչպէս ոմանք կը կարծէին, հասարակական համագրային կազմակերպութիւն մըն էր, որուն հոգածութեան առարկայ էին միայն՝ հայրենի հողին հաւատարիմ մնացող Հայերը: Եւ այդ ուղղութեամբ է որ Միութիւնը գործեց Հայաստանի և Կիլիկիոյ մէջ — զպրօցներ բանալով, դարմանատուններ և հիւանդանոցներ հաստատելով, զիւղացիներուն հող և սերմնացու հայթայթելով, արհեստավորներուն դրամագրութեան տալով, աղէտեալներուն նպաստելով, ևւն. ևւն.:

Դառնազէտ մեծ փոթորիկը մեր ազգային բոլոր հաստատութեանց հետ միասին աւերեց քանդեց այդ համեստ կոթողներն ալ, աւա՛ղ, — բայց Միութիւնն, ինքը, իր ամրակուռ հիմերուն վրայ մընաց անսասան ու կանգուն, և Ձինդաղարէն անմիջապէս յետոյ վերսկսեց գործի: Անիկա իր հովանին տարածեց անպատի քսորականներուն վրայ, և իր թեւերուն ներքեւ առաւ հազարաւոր ան-

63498-61



տէրունը հայաբղիններ, քաղաքական դժբխեմ գէպերուն համեմատ փոխելով իր գործունէութեանց զլիսաւոր դաշտերը, — Բորդ Սախտէն՝ Կիլիկիա, Կիլիկիայէն՝ Ետ, դէպի Սուրիա և Լիբանան: Ներկայ պահուս՝ անիկա ներկայացուցիչներ ունի Յունաստանի մէջ ալ, որ կը ջանան ամօրելու մեր չքաւոր տարագիրներուն տաւապանքը:

* * *

Հ. Բ. Ը. Միութեան անցեալ 20 տարիներուն վրայ յետադարձ ահնարիկ մը՝ պարծանքով և խրախուսանքնով կը պարարէ զմեզ: Անոր գործունէութեան մէջ սխալներ ու թերացումներ եղան անշուշտ: Ոչ ոք պիտի յաւակնէր «անքննադատելի» մակդիրը շնորհելու անոր վարիչներուն կամ պաշտօնեաներուն: Կրնանք հաւատալ սակայն, որ եթէ բաղբատութեան փորձ մը կատարուի՝ զերազանցութեան դասին պիտի պատկանի Հ. Բ. Ը. Միութեան: Նմանօրինակ ուրիշ ո՛չ մէկ ազգային հիմնարկութիւն փայլեցուցած է առողջ ու բեղմնաւոր կենսունակութիւնը այս «փոքրիկ հանրապետութեան», և պայծառ թափանցականութիւնը այս «ա-

պակիէ տան», — ըստ բացատրութեանց Միութեան հիմնադրին, Պօղոս փաշա Նուպարի:

Եւ այդ պայմաններուն շնորհիւ է որ Միութիւնը կարողացած է (մինչեւ 1925ի վերջը) դոյացնել 3,000,000 տոլարէ աւելի գումար մը, որուն մեծագոյն մասը ընդհանուր նպաստի յատկացուելով՝ 750,000 տոլարը կ'անցնի դրամադուլսի հաշուոյն, Կանոնադրի տրամադրութեան եւ կտակարարներու բաղձանքին համեմատ:

* * *

Ժամանակը եկած է որ ուժգին թափ մը տրուի Հ. Բ. Ը. Միութեան:

Ժամանակը եկած է նաեւ՝ որ անոր գործունէութեան ասպարէզն ու կերպերը ընդարձակուին:

Միութեան նպատակն է, ըստ Կանոնադրին՝

«Ա. Մայր-Հայրենիքի եւ Փոքր-Ասիոյ Հայ Ժողովրդին մտաւոր եւ բարոյական զարգացմանը նպաստել:

Բ. Անոր նիւթական եւ տնտեսական կացութիւնը բարւոքելու աշխատիլ:

Գ. Այս արդիւնքը յառաջ բերելու ծառայող որեւէ ձեռնարկ կամ հրատարակութիւն քաջալերել:

Սովորական, կամ քիչ շատ խաղաղաւէտ պայմաններու մէջ կարելի էր գոհացուցիչ քայլեր առնել այդ երեք գիծերուն վրայ ալ: Դժբախտաբար Հ. Բ. Ը. Միութեան հիմնարկումէն մինչեւ հիմա չանցաւ տարի մը առանց արտակարգ աղէտալի դէպքերու: Սովն ու կոտորածը, հալածանքն ու տեղահանութիւնը յաջորդեցին իրարու յարաձուն սաստկութեամբ, եւ ստեղծեցին այնպիսի վիճակ մը որ անպակի դարձուց իսկական նպատակին իրադրոժումը: Հարկ եղաւ որ Միութեան տրամադրելի ոյժերուն ամենամեծ մասը յատկացուի որբերուն եւ աղէտեալներուն:

Իսկ հիմա՝ կը գտնուինք Հայ մարտիրոսադրութեան մէկ նոր թուականին ըսկիզբը, բոլորովին տարբեր պայմաններու մէջ: Այսօր Հայութիւնը ջնջուած է Փոքր Ասիայէն եւ Մայր-Հայրենիքի թրջական նահանդներէն: Կայ Արարատեան Հայաստան մը, եւ կայ տարազիր Հայութիւն մը — Պալզանեան եւ Սուրիական երկիրներու մէջ ապաստանած ու մինչեւ

Յրանսա եւ Իտալիա սիռուած : Եղբրական
այս նոր կացութեան հանդէպ՝ Հ. Բ. Ը.
Միութեան կը մնայ շինարար եւ փրկա-
րար գործը յառաջ մղել, ո՛չ միայն անը-
կուն սրտով, հապա նաեւ բազմապատիկ
ուժով ու բազմապարփակ ծրագրով :

Մինչեւ հիմա՝ Միութեան ջանքերը
նուիրուեցան զուտ բարեգործութեան :
Ժամանակը հասած է որ անոր նպատակին
միւս ճիւղերն ալ ի նկատ առնուին : Թիւր-
քիոյ հայ տարրը արմատախիլ եղաւ իր
բնիկ հողէն, ու նետուեցաւ օտար ափերու
վրայ, նման մեր վաղեմի գաղթականու-
թեանց որոնց ոմանք անհետացած են այ-
սօր, եւ ուրիշները՝ մահամերձ կը գրոտ-
նուին :

Եթէ Հայ ազգի գոյութեան պահպա-
նումը մեր սիրական իտէալն է՝ անխուսա-
փելի հարկ կը ծագի իմաստուն եւ կորո-
վի պայքարի : Եւ այդ պայքարը պէտք է
մղուի թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական
ոյժերով, թէ՛ տնտեսական եւ թէ՛ մտա-
ւոր մարզերու մէջ : Արարատեան դաշտի
գլխաւորն սերմնացու եւ լծկան կ'ուղէ-
տարաշխարհի գաղթականը ուտեստ եւ
զգեստ կ'ուզէ : Ասոնք հայթայթենք որ-
չափ որ հնարաւոր է, բայց զանց չընենք

այն միւս պէտքերն ալ որ անհրաժեշտ են՝
անոր միտքը չլուսնալուսնաւոր արեւո-
ւացնելու, ընդունակութիւնները սրելու,
եւ այդ ամէնուն հետ միասին՝ անոր ազ-
գային գլխաւորութիւնը հրահրելու : Ա-
սիկա կը նշանակէ՝ դաստիարակութիւնը
Հայ անհատին, եւ զօրեղացումը ամբողջ
ցեղին : Հ. Բ. Ը. Միութիւնը կրնա՞յ գոնէ
քսան տարի այս ուղղութեամբ օգնել Հայ
Ժողովրդին :— Եթէ այո՞՝ վստահ ըլլանք
որ վաղուան սերունդը պիտի կազմէ նոր
Հայութիւն մը, առողջ եւ կորովի, բանուկ
եւ ճարտար, քաջասիրտ եւ ուղղամիտ,
շինարար եւ բարեկեցիկ : Առանց չափա-
զանցութեան կրնայ ըսուիլ թէ վերջին
քառորդ դարու միջոցին Հայ ազգը կոր-
սընցուց իր զաւակներուն մէկ երրորդը,
իր մտաւորականներուն մէկ երկրորդը, եւ
իր նիւթական հարստութեան երեք չոր-
րորդը : Աղէտը անաւոր է, անտարակոյս,
բայց պէտք չէ՛ յուսահատիլ. պէտք է
խելքի ոյժը գործածել. արժէքաւոր ան-
հատներու թիւը բազմացնել, եւ ինչ որ
քանակով պակասեցաւ՝ որակով փոխարի-
նել :

Եւ որպէս զի այդ փառաւոր արդիւնքը
ձեռք բերուի՝ Հ. Բ. Ը. Միութեան պէս

մարմին մը պէտք է ստանձնէ հետեւեալ պարտականութիւնները.—

Ա.— Առատօրէն նպաստել Հայաստանի շինարարական ձեռնարկներուն, — ՀՅԿի ձեռքով կամ տարբեր միջոցներով :

Բ.— Խնամքով դաստիարակել եւ ինքնապահ աշխատանքի վարժեցնել հայ որբերը, մանչ եւ ազջիկ, եւ զանոնք հետըզհետէ Հայաստան փոխադրել :

Գ.— Միջոցներ ձեռք առնել որ օտար հաստատութեանց մէջ գտնուող հայ որբերը չի զրկուին ազգային կրթութենէ :

Դ.— Որոշ գումար մը յատկացնել՝ Միջագետքի անապատը եւ ուրիշ տեղեր գտնուող երկեսս հայ գերիներու ազատագրութեան գործին :

Ե.— Կանոնաւոր յարաբերութիւն մը չափել բոլոր աշխարհի հայ զազութիւններուն հետ, եւ անոնց մէջ ազգային գիտակցութիւնը վառ պահել, Հայաստանը շինելու բաղձանքն արծարծել :

Զ.— Մերձաւոր Արեւելքի զազթափայլերուն մէջ, մասնաւորապէս Սուրիա եւ Յունաստան, եղբայրական օգնութիւն մատուցանել մեր տարագիրներուն, — այսինքն՝ ինամք հասցնել հիւանդներու, առաջնորդել անփութներու եւ պանդուխտ-

ներու, ապրուստի միջոց գտնել անգործներու, ընդհանրացընել առողջապահական եւ կենցաղավարական գիտելիքները, քաջալերել ամուսնական կեանքը, մաքառիլ մոլութեանց դէմ, ինչպէս են՝ թղթախաղը, արբեցութիւնը, շոյլութիւնը, կրօնազանուցիւնը, եւն. եւն. :

Այս բոլորը միասին կը նշանակեն թէ Հ. Բ. Ը. Միութիւնը դաստիարակի, խրնամակալի եւ պաշտպանի դերը ստանձնելով պիտի ջանայ բարելաւելու Հայ ազգին նիւթական եւ տնտեսական վիճակը, եւ զարգացընելու անոր մտաւոր եւ բարոյական ոյժերը :

Ինծի կը թուի, վերջապէս, թէ ներկայ թուականէն սկսեալ, Հ. Բ. Ը. Միութիւնը, քսանամեայ երիտասարդի մը խելահաս, կորովի եւ մեծաբաղձ (ambitious) հոգեբանութեամբը համակուած՝ պէտք է օրդեգրէ նոր մեթոտ մը, — քաջակորով եւ արդիւնաշատ (aggressive and efficient) գործունէութեան մեթոտը :

Հ. Բ. Ը. Միութիւնը պէտք է աւելի որոշ զգայ իր պատասխանատուութիւնը Հայաստանի եւ Հայութեան հանդէպ, եւ պահպանողական ինսյոդութեան ցանչէն դուրս ելած՝ իր յատուկ պաշտօնական-

րուն, առաքեալներուն, բ... եւ
քարոզիչներուն միջոցով հասնի ուր որ
հարկն է, — օգնելու եւ քաջալերելու, կըր-
թելու եւ լուսաւորելու... :

Այդ կերպով միայն Հ. Բ. Ը. Միու-
թիւնը կրնայ դառնալ համազգային եղ-
բայրակցութեան այն օղակը, որ իրարու
պիտի զօդէ աշխարհիս չորս անկիւնները
սփռուած Հայերը :

* * *

Ամերիկան աշխարհիս ամէնէն հա-
րուստ ու ամէնէն բախտաւոր երկիրն է :
Հետեւաբար Ամերիկայի Հայութիւնն որ
իր այս բնակավայրին կամ նոր հայրենի-
քին բարիքները կը վայելէ՝ բացառիկ
պարտականութիւններ ունի հանդէպ Հայ
ցեղին եւ Մայր-Հայրենիքին :

Արդար ըլլալու համար ըսենք թէ Ա-
մերիկայի Հայութիւնն իր պարտականու-
թիւնը կատարած է որոշ չափով մը : Վեր-
ջին տասը տարուան ընթացքին այս երկ-
րին մէջ կատարուած ժողովրդային նուի-
րատուութեանց եւ հանդանակութեանց
արդիւնքը կը մօտենայ 3,000,000 տոլարի :
Թերեւս նոյնչափ գումար մը կը կազմեն՝
Հայ անհատներու կողմէ ազգականներու

եւ բարեկամներու զրկուած նպաստները
եւ փոխատուութիւնները : Հ. Բ. Ը. Մի-
ութեան քսան տարուան հասոյթներուն
մէջ երրորդը, մօտաւորապէս 1,000,000
տոլար, Ամերիկայի մասնակցութեան
բաժինն է :

Բայց այս դաղութը, իր առատաձեռ-
նութեանը համար գովելի՝ կարող է շատ
աւելի զօրեղ աջակցութիւն ընծայելու Հ.
Բ. Ը. Միութեան : Միութեան Ամերիկայի
անդամներուն թիւը, որ քանի տարիներէ
ի վեր կը հաշուուի 6000, ինչո՞ւ չը հասնի
20,000ի : Տարեվճարի նուազագոյն քանա-
կը որ 3 տոլար է — ինչո՞ւ չը բարձրա-
նայ 6 տոլարի : Տարեկան ամբողջ հասոյ-
թը որ այսօր 100,000 տոլարի շուրջն է
ինչո՞ւ չը լինի գոնէ 200,000 տոլար :

Անվիճելի իրողութիւն մըն է որ մեր
Շրջանակային Յանձնաժողովները, վար-
չութիւնները եւ պաշտօնեաները մինչեւ
հիմա շատ ժամանակ եւ ջանք գոհեցին : Եւ
այդ զոհողութեանց չնորհիւ է որ Հ. Բ.
Ը. Միութիւնն այսչափ աճեցաւ ու զօրա-
ցաւ Ամերիկայի մէջ : Բայց եւ այնպէս՝
լաւ լաւագունին քշումի է, ինչպէս կ'ը-
սէ առածը : Մենք իրաւունք ունինք աւելի՛
առատ հունձք ակնկալելու այս լայնածա-

ւալ եւ արդաւանդ անդաստանէն : Պէտք է
խոստովանիլ որ Հ. Բ. Ը. Միութիւնը
տակաւին չէ դնահատուած արժանապէս :
Հագարաւոր Հայեր կան որ իբրեւ անդամ
արձանագրուած ըլլալու էին ժինչեւ հի-
մա , բայց չեն : Եւ փոքր չէ թիւը անոնց ալ
որ թէեւ ժամանակին անդամագրուած
որոշ իրենց պարտքը մոռնալ կը ձեւա-
ցընեն եւ իրենց դրկուած հրաւիրուած
հաշուեթղթերը դամբիւղ կը նետեն . . . :

Ջանանք որ պարտաճանաչութեան շե-
փորը արձագանդ գտնէ ամէն հայ սրտե-
րու խորը , եւ նոր թուական մը բացուի
Ամերիկահայ դաղութի պատմութեան
մէջ :

Քսանամեակը թող ըլլայ գեղեցիկ
պատեհութիւն մը՝ յուսով ու հաւատքով
գործի փարեւու , որպէս զի Հ. Բ. Ը. Մի-
ութիւնը յառաջիկայ տարին բոլորէ ան-
նախընթաց յաջողութեամբ :

Եւ ներուի ինձ այս առթիւ հանրա-
յին ուշադրութեան ներկայացնել մի քանի
առաջարկներ , որ եթէ ընդունուին ու կի-
րարկուին՝ կրնան գմեղ առաջնորդել ոչ-
պի բաղձացեալ նպատակը :

Ա. Խնդրել վարչական անդամներէն
որ իրենց ընտրութեան օրը հանդիսապէս

խոստանան ճշդապահ եւ հաւատարիմ ծա-
ռայութիւն , ցորչափ գտնուին պաշտօնի
վրայ :

Բ. Ընդհանրացնել «փոխան ծաղկեպը-
սակի» նուիրատուութիւնները յուղար-
կաւորութեանց առթիւ , նոյնպէս խնդակ-
ցական նուիրատուութիւնները՝ մկրտու-
թեան , նշանուքի եւ հարսնիքի առթիւ :

Գ. Գանձանակներու թիւը բազմա-
պատիել հայ գործատեղիներու եւ գրա-
սենեակներու մէջ :

Դ. Միութիւնը ծանօթացնել եւ սի-
րելի դարձընել մեր անդլիխսօս նոր սե-
րունդին եւ այն Հայերուն որ ազգէն օ-
տարացած եւ մեկուսացած կ'ապրին :

Ե. Միութեանս օգտին կտակներ եւ
կեանքի ապահովագրութիւններ ձեռք բե-
րել :

Զ. Յարաբերութիւն հաստատել Ամե-
րիկահայոց Հայրենակցական , Կրթասի-
րական եւ Վերաշինական կազմակերպու-
թեանց հետ :

* * *

Վերոյիշեալ առաջարկներու որդեգը-
րումը եւ կիրարկումը բնականաբար կ'ա-
կընկալուին Շրջանակային Յանձնաժողո-

վէն եւ Մասնաճիւղային Վարչութիւննե-
րէն, եւ կամ վճարեալ աշխատուորնե-
րէն: Յայտնի բան է սակայն որ մեր պաշտո-
նական մարմիններուն եւ զործիչներուն
յաջողութիւնը շատ աւելի արագ եւ փայ-
լուն կ'ըլլայ եթէ Միութեանս ամէն մէկ
անդամն ալ իր սիրայօժար ծառայութեան
բաժինը մատուցանէ: Արովհետեւ առա-
ջադրուած վսեմ նպատակներուն իրակա-
նացման համար պէտք կայ բազմատեսակ
ոյժերու — խորհուրդի եւ զգացումի, աշ-
խատանքի եւ նուիրումի, քարոզութեան
եւ առաքելութեան, — մէկ խօսքով՝ Աիւ-
թական եւ բայրայական գոհողութեանց:

Ո՛ւր էր թէ Հ. Բ. Ը. Միութեան նը-
շանակութիւնը լիովին ըմբռնուէր, եւ զո-
հողութիւնները կատարուէին արժանա-
վայել փութկոտութեամբ եւ խանդավա-
ռութեամբ:

Ասկէ տասներեք տարի առաջ, երբ
Միութեան ծնունդին «Յօթնամեակը» կը
չնորհաւորէի փոքրիկ հրատարակու-
թեամբ մը՝ Ամերիկայի մէջ կազմուած
էին 47 մասնաճիւղներ, 2000 անդամնե-
րով: Այսօր՝ մասնաճիւղներուն թիւը
կրկնապատկուած է, եւ անդամներունը՝
եռապատկուած: Այսօր՝ Հ. Բ. Ը. Մի-

ութիւնն Ամերիկայի մէջ կը վայելէ թան-
կագին աջակցութիւնը որբախնամ պատ-
ուական տիկիներու, ինչպէս եւ համակ-
բութիւնը բազմաթիւ ահանաւոր Ամերի-
կահայերու: Անցեալին հետ ներկայիս այս
համեմատութիւնը քաջալերական է ան-
շուշտ, բայց, ափսո՛ս որ անբաւական է
ժամանակի պահանջներուն:

Վերջին տասներեք տարուան միջոցին
ազգովին ենթարկուեցանք աննախընթաց
արհաւիրքներու. կրակէ անձրեւներ տե-
ղացին մեր գլխուն. արիւնի լիճեր բաց-
ուեցան մեր ճամբուն վրայ. մեր ընտա-
նեկան ծխաններուն մուխը մարեցաւ. մեր
հայրենի տաճարներուն խունկը դադրե-
ցաւ: Եւ տակաւին մեր աչքերուն առջեւ
են քստմենիլ պատկերները դահիճներուն,
եւ մեր ահանջներուն կը հնչեն՝ աղէխարչ
լալօնքը մեր հայրիկներուն ու մայրիկնե-
րուն, աղբարիկներուն ու քուրիկներուն,
ուստրիկներուն ու դստրիկներուն...:

Հայե՛ր, եթէ ձեր սիրտերը կսկիծով
կը մորմոքին՝ ու եթէ ձեր հոգիները դայ-
րոյթով կը բորբոքին՝ եկէ՛ք, միացէք Հ.
Բ. Ը. Միութեան շարքերուն: Եկէ՛ք ան-
վարան ու անյապաղ: Միութիւնը զօրու-
թիւն է: Միութիւնն է որ պիտի բուժէ ձեր

դասն կսկիծը: Միութիւնն է որ պիտի լուծէ ձեր արդար վրէժը: Յառա՛ջ. պըն- դակազմ հետեւեցէք այն դրօշակին որ կ'առաջնորդէ դէպի Հայութեան վերածը- նութիւնը, դէպի Հայաստանի վերաշինու- թիւնը:

Վ. Մ. ՔԻՒՐՔՃԵԱՆ

Մայիս 31, 1926

Նիւ Եորք

Այս տետրակին պարունակութեան մէկ մասը արտատպուած է՝ Հայաստանի կոչնակին մէջ 1923ին երեւցած մէկ յօդուածէս:

Հաճեցէք կարդալէ վերջ զայն տալ հայ բա- րեկամի մը:

Եւ եթէ ուրիշ օրինակներ կ'ազգէ՛ դիմեցէք այս հասցէին. —

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
287 Fourth Avenue New York City



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՍՈՑԹՅՈՒՆԵՐԸ
ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի ա- ոսջին մասնաճիւղը Պոսթոն հիմնուեցաւ 1909ի սկիզբը: Մինչև 1925ի Դեկտ. 31 Միութեան Կեդրոնական զանձն Ամերիկա- յէն ընդունած է \$1,055,451.53 հետեւեալ կերպով:

1909ին	\$2,340.00
1910ին	2,849.35
1911ին	7,340.86
1912ին	9,839.37
1913ին	7,226.40
1914ին	23,689.86
1915ին	22,213.26
1916ին	18,811.81
1917ին	21,174.10
1918ին	49,548.26
1919ին	124,282.34
1920ին	212,364.21
1921ին	115,187.77
1922ին	102,592.69
1923ին	
1924ին	
1925ին	

ՀՀ Ազգային գրադարան



Գումար

43 184

—	Հ. Բ. Ը. Միութեան խաձեռնութեամբ կա- ւած American-Armenian Relief Fundի հասոյթը (1916-17)	55,300.00
•	—	
•	—	
•	Հ. Բ. Ը. Միութեան նա- խաձեռնութեամբ Բարիգի Ազգ. Հիմնադրամին հա- մար հանգանակուած	11,000.00
—	Նիյր Իսթ Րիլիֆէն կրկ- նապատկուած նպաստ	89,000.00
—	Ա. և Մ. Գարակէօղեան Տան նպաստը 150 որբերու համար, մինչև 1925 Դեկտ. 31	72,000.00

